ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Էդուարդ Հակոբյանի՝ 2023թ. հոկտեմբերի 11-ից 15-ը ք. Մարաքեշ (Մարոկկոյի Թագավորություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Էդուարդ Հակոբյան, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Մարաքեշ, Մարոկկոյի Թագավորություն, 2023 թվականի հոկտեմբերի 11-ից 15-ը

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) և Համաշխարհային բանկ (ՀԲ)

***4.* Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ԱՄՀ/ՀԲ խմբի 2023 թվականի տարեկան հանդիպումներին՝ որպես ԱՄՀ և ՀԲ կառավարիչների խորհուրդներում Հայաստանի փոխկառավարիչ:

5. Քննարկված թեմաները՝

ԱՄՀ/ՀԲ տարեկան հանդիպումները հնարավորություն են տալիս բարձրաստիճան հարթակում համաշխարհային ֆինանսատնտեսական միջավայրում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ քննարկումներ իրականացնել, երկկողմ հանդիպումներ ունենալ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, վարկանշային գործակալությունների, ներդրումային բանկերի պատվիրակությունների ու ներկայացուցիչների հետ, քննարկել նաև համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպես նաև մասնակցել գլոբալ մարտահրավերներին առնչվող միջոցառում-քննարկումներին:

ԱՄՀ/ՀԲ 2023թ. տարեկան հանդիպումների ժամանակ քննարկումները ծավալվել են այնպիսի կարևոր ոլորտների շուրջ, ինչպիսիք են՝ համաշխարհային տնտեսությունը, միջազգային տնտեսական իրավիճակի զարգացումները, արդի աշխարհաքաղաքական մարտահրավերները և դրանց ազդեցությունը տնտեսական զարգացման վրա, համաշխարհային ֆինանսական շուկաներում ներկա իրավիճակն ու ապագա միտումները, համաշխարհային ֆինանսական կայունությունը, իսկ երկկողմ հանդիպումների ընթացքում կողմերն անդրադարձել են ՀՀ մակրոտնտեսական իրավիճակին, ստեղծված իրավիճակում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության առաջնային կարիքներին ու միջնաժամկետ ծրագրերին, այդ ուղղությամբ միջազգային գործընկերների օժանդակության հնարավոր գործիքներին ու դրանց կիրառման մանրամասներին, Հայաստանի հետ ընթացիկ և հետագա համագործակցությանն առնչվող հարցերին և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ԱՄՀ/ՀԲ 2023թ. տարեկան հանդիպումների օրակարգը հագեցած էր ԱՄՀ և ՀԲ, ինչպես նաև միջազգային զարգացման այլ գործընկերների, վարկանշային կազմակերպությունների ու ներդրումային բանկերի բարձրաստիճան պաշտոնատար անձանց և օտարերկրյա մի շարք գործընկեր երկրների պատվիրակությունների հետ երկկողմ հանդիպումներով, ինչպես նաև ԱՄՀ-ի և ՀԲ-ի Կառավարիչների խորհուրդների պլենար նստաշրջանով և Հայաստանն ընդգրկող Ընկերակցային խմբերի միասնական նիստով:

Բոլոր երկկողմ հանդիպումների ընթացքում, ի լրումն քննարկվող բազմաթիվ այլ հարցերի, իմ կողմից մանրամասն ներկայացվել է ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և կանխատեսումները, ստեղծված իրավիճակում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության առաջնային կարիքներն ու միջնաժամկետ ծրագրերը, հետագա անելիքները, քննարկումներ են ծավալվել այդ

ուղղությամբ միջազգային գործընկերների հնարավոր աջակցության առկա գործիքակազմի ու դրանց կիրառման մանրամասների շուրջ: Մասնավորապես՝

Այցի առաջին օրը մեկնարկել է Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ)՝ Եվրոպայի տարածաշրջանի տնօրեն Ռանա Կարադշեհի հետ հանդիպումով: Քննարկվել է ընթացիկ համագործակցությունը, համագործակցության պոտենցիալ ոլորտները, ՀՀ-ում ՄՖԿ ներդրումային հեռանկարներին առնչվող հարցեր: Միաժամանակ, անդրադարձ կատարելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի բնակարանային խնդրին՝ ՄՖԿ-ի կողմից պատրաստակամություն է հայտնվել բանկային համակարգի միջոցով ներգրավվել Հայաստանում բնակարանաշինության հնարավոր ծրագրերի ֆինանսավորմանը:

- Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության գլխավոր տնօրեն Եվգենի Ժուկովի հետ հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանում ԱԶԲ պորտֆելին, ընթացիկ ծրագրերին, առկա խնդիրներին, հնարավոր նոր ծրագրային նախաձեռնություններին:

Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ քննարկել է նաև ԱԶԲ-ից հնարավորինս արագ ընթացակարգերով աջակցության ներգրավման հնարավոր տարբերակներն ու մեխանիզմները: Այս առումով երկուստեք ընդգծվել է ԱԶԲ և Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) հետ քաղաքականությունների վրա հիմնված համատեղ ծրագրի երկրորդ փուլի (Ենթածրագիր 2) շուրջ կողմերի ակտիվ աշխատանքը՝ չբացառելով նաև ծրագրի ներքո գումարի չափի ավելացման հնարավորությունը:

Մտքեր են փոխանակվել նաև ԱԶԲ՝ «Արտակարգ իրավիճակներում աջակցությանն ուղղված վարկ» (Emergency Assistance Loan (EAL) գործիքի մասին: Նշյալ գործիքը ներդրվել է ԱԶԲ կողմից 2004թ. և կիրառվում է կարևոր ենթակառուցվածքների վերակառուցման և հիմնական ծառայությունների վերականգնման համար: Գործիքը շեշտը դնում է վարկերի արագ հաստատման վրա՝ նպատակ ունենալով աջակցել արտակարգ իրավիճակներից հետո բարձր

առաջնահերթություն ունեցող ֆիզիկական ակտիվների և տնտեսական, սոցիալական և կառավարչական գործունեության վերականգնմանը: Այն արտակարգ աջակցության գործիք է, որը հաստատվում է բնական աղետների, առողջապահական արտակարգ իրավիճակների, սննդի անապահովության, տեխնոլոգիական և արդյունաբերական վթարների և հետկոնֆլիկտային իրավիճակների հետևանքով առաջացած աղետների համատեքստում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք, Տրանշ 4, Քաջարանի թունելի շինանարարության ծրագրին, որի առնչությամբ Ե. Ժուկովը տեղեկացրել է, որ նշված ծրագրի վերաբերյալ ՀՀ կառավարության ցանկացած որոշման պարագայում ԱԶԲ-ը պատրաստ է տրամադրել ֆինանսավորում:

<u>Այցի 2-րդ օրը</u> սկսվել է միջազգային վարկանշային գործակալությունների՝ «Moody's»-ի և «Standard and Poor's»-ի ներկայացուցիչների հետ հանդիպումներով: Իմ կողմից մանրամասն ներկայացվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ կապված իրավիճակը, տնտեսական իրավիճակը և ՀՀ կառավարության ֆիսկալ գործողությունները՝ ֆիսկալ կայունության պահպանմամբ բոլոր խնդիրները լուծելու և ռիսկերը կառավարելու ուղղությամբ՝ հասցեագրելով և փարատելով գործակալությունների մտահոգությունները:

- Առանձին հանդիպում ենք ունեցել նաև Սլովենիայի ֆինանսների նախարարի տեղակալի գլխավորած պատվիրակության հետ: Քննարկվել են երկու երկների ֆինանսների նախարարությունների միջև համագործակցության ակտիվացման և փորձի փոխանակման ծրագրերի հնարավորությունները՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով (ծրագրային բյուջետավորում, ռազմավարական պլանավորում, մակրոտնտեսական կանխատեսումներ, ֆիսկալ ռիսկեր, պետական պարտքի կառավարում, հարկային քաղաքականություն և այլն):

- Եվրոպական ներդումային բանկի (ԵՆԲ) փոխնախագահ պրոֆեսոր Թերեզա Ցզերվինսկայի հետ հանդիպմանը քննարկվել են Հայաստանում ԵՆԲ պորտֆելին,

ԵՆԲ ֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագրերին, մեկնարկելիք նոր ծրագրերին (Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ», Սյունիքում իրականացման ենթակա ծրագրերի շրջանակային վարկ, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք, Տրանշ 5, Գյումրիի շրջանցիկ հատված) առնչվող հարցեր: ԵՆԲ փոխնախագահը նույնպես պատրաստակամություն է հայտնել կիսվելու փախստականների խնդիրների լուծման և, ըստ անհրաժեշտության, համապատասխան ծրագիր մշակելու և իրականացնելու վերաբերյալ փորձով: Անդրադարձ է կատարվել նաև Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4՝ Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի վերակառուցման ծրագրին:

- Հաջորդ առանձին հանդիպումները կայացել են Համաշխարհային Բանկի (ՀԲ) փոխնախագահ Անտոնելլա Բասսանիի և ՀԲ՝ Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեն Կուն Դավիդսեի և 2023թ. նոյեմբերի վերջինիս փոխարինող Եվգենի Ռուգենաթի հետ:

ՀԲ փոխնախագահի հետ քննարկվել են՝

- Ստեղծված իրավիճակում Համաշխարհային բանկի կողմից արագ ֆինանսավորման գործիքները: Դրանք ներառում են՝

(i) բյուջետային աջակցության վարկային ծրագրի գումարի չափի ավելացման հնարավորություն,

(ii) **Արտոնյալ ֆինանսավորում Համաշխարհային արտոնյալ ֆինանսավորման գործիքի (GCFF - Global Concessional Financing Facility) շրջանակներում՝ ուղղված փախստականներ ընդունող երկրներին:** «GCFF» դրամաշնորհը կհամակցվի ՎԶՄԲ վարկային միջոցների հետ՝ վարկի մինչև 25%-ի չափով: Նմանօրինակ ծրագրերը, որպես կանոն, մշակվում և հաստատվում են հրատապ կերպով (առկա է մեկ ամսվա ընթացքում ծրագրի հաստատման նախադեպ): Դոնոր կառավարություններ են համարվում Կանադան, Եվրոպական հանձնաժողովը, Դանիան, Գերմանիան, Ճապոնիան, Նորվեգիան,

Նիդերլանդները, Շվեդիան, Միացյալ Թագավորությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները:

(iii) **Պետության և խաղաղության հաստատման դրամաշնորհային ֆինանսավորում՝** շուրջ 5 մլն ԱՄՆ դոլարի չափով, որի առաջարկը ՀԲ-ի կողմից կմշակվի առաջիկայում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի, ինչպես նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների հետ համաձայնեցված բովանդակությամբ:

(iv) **Առկա վարկային ծրագրերի նպատակների վերաձևակերպում:** Օրինակ՝ Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի (SPAP II) 6 ամսով արտակարգ երկարաձգում տեղահանված անձանց և նրանց հյուրընկալող ընտանիքներին աջակցություն տրամադրելու նպատակով և/կամ Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման (SILD) ծրագրի վերակառուցում՝ բնակարանային վաուչերի ծրագրի իրականացմանն աջակցելու համար: Բացի այդ, առկա են հասանելի միջոցներ նաև «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածք» (TPQI) ծրագրի ներքո՝ 9 մլն ԱՄՆ դոլարի չափով:

- Ներկայումս ՀԲ-ի հետ քննարկվող 2՝ ջրային և առողջապահության ոլորտներում «Ծրագիր արդյունքի դիմաց» («PforR») գործիքի կիրառմամբ ծրագրերի նախապատրաստման ընթացք, հետագա քայլեր: Առողջապահության ոլորտում ծրագրի մասով երկուստեք կարևորվել է ծրագրի նախապատրաստման ու վերջնականացման ուղղությամբ թիմերի աշխատանքների ակտիվացման անհրաժեշտությունը: Ջրային ոլորտի ծրագրի շրջանակներում քննարկվել է նաև ծրագրում հողային բարեփոխումների ֆրանսիական մոդելի ներառման հնարավորությունը: ՀԲ փոխնախագահը հայտնել է պատրաստակամություն՝ շարունակելու համագործակցությունը նշյալ ուղղություններով:

- Համաշխարհային բանկի՝ Հայաստանի հետ «2024-2028թթ. Երկրի գործընկերության շրջանակ»,
- Հայաստանում ՀԲ պորտֆելին, ՀԲ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերին, առկա խնդիրներին ու հետագա համագործակցության նոր հեռանկարային ուղղություններին առնչվող հարցեր:

ՀԲ՝ Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեն Կուն Դավիդսեի և 2023թ. նոյեմբերի վերջինիս փոխարինող Եվգենի Ռուգենաթի հետ հանդիպմանը շնորհակալություն եմ հայտնել Կուն Դավիդսեին իր պաշտոնավարման ընթացքում արդյունավետ համագործակցության և Հայաստանի շահերը պատշաճ կերպով ներկայացնելու համար: Միաժամանակ շնորհավորել եմ նորանշանակ տնօրեն Եվգենի Ռուգենաթին՝ մաղթելով հաջողություններ իր նոր առաքելության մեջ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Գործադիր տնօրենի գրասենյակի հետ հայկական կողմի համագործակցությանը, աշխատակարգին առնչվող հարցեր: Հայկական կողմից բարձր է գնահատվել ՀԲ կողմից իրականացված «Երկրի ախտորոշում» կոչվող ուսումնասիրությունը և վերջիններիս արդյունավետությունը: Միաժամանակ առաջարկել ենք, հնարավորության դեպքում, Երկրի գործընկերության շրջանակների իրականացման արդյունքների գնահատումներում ներառել նաև տնտեսության վրա դրանց ազդեցության գնահատման վերլուծություն, ինչը թույլ կտա էլ ավելի արդյունավետ գնահատել ծրագրերի իրականացումը և համապարփակ պատկերացում կազմել դրանց ունեցած ազդեցության վերաբերյալ:

- Առանձին հանդիպումներ են կայացել նաև Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Ջիհադ Ազուրի, ԱՄՀ գործադիր խորհրդում Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեն Փոլ Հիլբերսի և ԱՄՀ Հարկաբյուջետային հարցերով վարչության հետ:

Քննարկվել են ԱՄՀ աջակցությամբ իրականացվող պահուստային ծրագրի՝ 2023թ. սեպտեմբերից մեկնարկած երկրորդ վերանայման աշխատանքները:

Երկուստեք կարևորվել է երկրորդ վերանայման ամփոփումը, որը հստակ ազդակ կհղի աշխարհին, որ անկախ առկա շոկերից, ՀՀ մակրո կայունությունը պահպանվում է, իսկ կառավարությունը պատրաստ է կառավարել ներկա վիճակն ու դրանից բխող ռիսկերը:

Անդրադառնալով ստեղծված իրավիճակում հնարավոր աջակցության գործիքներին՝ ԱՄՀ կողմից տեղեկացվել է, որ չնայած ԱՄՀ-ն հատուկ ծրագրեր չունի փախստականների մասով, սակայն պատրաստ է աջակցել տեխնիկական աջակցության և մակրո գնահատումների դաշտում:

ԱՄՀ Հարկաբյուջետային հարցերով վարչության հետ հանդիպումը նվիրված էր հիմնականում ԱՄՀ կողմից Հայաստանին տրամադրվող տեխնիկական աջակցության նոր ուղղություններին: Իմ կողմից մանրամասն ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համար առանցքային տեխնիկական աջակցության ուղղությունները և պայմանավորվածություն ձեռք բերվել դրանց բոլորի ստացման ժամկետների շուրջ: Նաև առաջարկել եմ համապատասխան մեխանիզմներ՝ տեխնիկական աջակցություններն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

- Հանդիպում է տեղի ունեցել նաև նաև «Citibank»-ի և «J.P. Morgan»-ի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվել միջազգային շուկայում պարտատոմսերի թողարկման և հետգնման ուղղությամբ համագործակցությանը: «J.P. Morgan»-ի ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել 2025թ. մարվող եվրապարտատոմսերի մի մասի վերջին հետգնումը իրենց հետ կազմակերպելու համար և տեղեկացրել, որ դա շատ դրական ազդակ է հաղորդել ներդրողներին ՀՀ զարգացումների վերաբերյալ:

- Մասնակցել ենք նաև ԱՄՀ-ի և ՀԲ-ի Կառավարիչների խորհուրդների պլենար նստաշրջանին և Հայաստանն ընդգրկող Ընկերակցային խմբերի միասնական հանդիպմանը:

- Հայաստանն ընդգրկող Ընկերակցային խմբերի հանդիպմանը նիստը վարող Նիդերլանդների և Բելգիայի կառավարության ներկայացուցիչներն ու ԱՄՀ և ՀԲ ընկերակցային խմբերն առաջնորդող գործադիր տնօրենները ներկայացրել են ՀԲ վերջին զարգացումները և Բանկի առաջիկա տարվա քաղաքականության հիմնական շեշտադրումները: Վերջիններս իրենց ելույթներում նաև զորակցություն են հայտնել Իսրայելի, Ուկրաինայի ժողովրդին և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերին:

- Կառավարիչների խորհրդի պլենար նիստին անդրադարձ է կատարվել համաշխարհային ներկա մարտահրավերներին, հատկապես աշխարհաքաղաքական լարվածությունների հետևանքով առաջացած և դրանց ազդեցությանը համընդհանուր տնտեսական զարգացման վրա: Ելույթներով հանդես են եկել ՀԲ նախագահ Աջայ Բանգան և ԱՄՀ կառավարիչ-տնօրեն Կրիստալինա Գեորգիևան:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

1. Ստեղծված իրավիճակում միջազգային զարգացման գործընկերների կողմից հնարավոր աջակցության գործիքակազմի բացահայտման ու դրանց կիրառման հնարավորությունների համատեքստում ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները՝

- Ներկայումս ՀԲ և ԱԶԲ հետ քննարկվող բյուջետային աջակցության վարկային ծրագրերի շրջանակներում ՀԲ-ի և ԱԶԲ-ի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատել արագացված ընթացակարգերով՝ ըստ անհրաժեշտության, վարկային միջոցները 2024թ. առաջին եռամսյակում հասանելի դարձնելու նպատակով: Բացի այդ, համաձայնություն է ձեռք բերվել նաև այդ ծրագրերի գումարների չափի ավելացման հնարավորության շուրջ:

- Արտոնյալ ֆինանսավորում Համաշխարհային արտոնյալ ֆինանսավորման գործիքի (GCFF - Global Concessional Financing Facility) շրջանակներում ՀԲ փոխնախագահի և «GCFF» հիմնադրամի տնօրենի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ բացի դոնոր երկրների հայկական կողմի երկխոսությունից, իրենց կողմից ևս կապ կհաստատվի վերջիններիս հետ: Նշյալ հիմանդրամին Հայաստանին ֆինանսավորման նպատակով ներդրումներ կատարելու շուրջ համատեղ աշխատանքներ մեկնարկելու վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել նաև Նիդերլանդների ֆինանսների նախարար-փոխվարչապետի, ՀԲ տնօրենների խորհրդում Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրենի հետ:

Համատեղ կարևորվել է նաև Նիդերլանդներին, Ճապոնիային և ԱՄՆ-ին հայկական կողմից պաշտոնական հայտեր ներկայացնելու անհրաժեշտությունը: ՀԲ փոխնախագահի կողմից առանձնացվել են նաև Ֆրանսիան, Շվեյցարիան և Նորվեգիան՝ որպես հնարավոր դոնորներ:

- Միջազգային բոլոր գործընկեր կառույցների կողմից առաջարկվել է դիտակել և պատրաստակամություն է հայտնվել ստեղծված իրավիճակում իրականացնել ընթացիկ վարկային ծրագրերի ներքո առկա խնայողությունների և/կամ չմասհանվելիք գումարների չափով ծրագրերի նպատակի վերաձևակերպում՝ հնարավորություն տալով հայկական կողմին այդ միջոցներն ուղղել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության ուղղված ծրագրերին:

- Բնակարանաշինության ոլորտում մասնավոր հատվածին ֆինանսավորում - ՄՖԿ-ի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի կողմից պատրաստակամություն է հայտնվել բանկային համակարգի միջոցով ներգրավվել Հայաստանում բնակարանաշինության հնարավոր ծրագրերի ֆինանսավորմանը:

- Սլովենիայի ֆինանսների փոխնախարարի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել երկկողմ համագործակցությունը արդյունավետ և կանոնավոր ապահովելու

համար մշակել և ստորագրել համատեղ հուշագիր, որը նաև կներառի համագործակցության հիմնական ուղղությունները:

- Տեխնիկական աջակցություն. ՀԲ-ը հայտնել է իր պատրաստակամությունը՝ ներգրավվելու փախստականների կարիքների արագ գնահատման, համապատասխան հարցումների իրականացման, դրանց հիման վրա արդյունավետ ինտեգրման քաղաքականությունների /զբաղվածության ու բնակարաններով ապահովման քաղաքականությունների/ մշակման և հետագա կոնկրետ ծրագրերի իրականացման գործում:

2. ԱՄՀ տեխնիկական աջակցութուն – ԱՄՀ Հարկաբյուջետային հարցերով վարչության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել հայկական կողմի համար բոլոր առանցքային կարիքների /հարկային համակարգի վերանայում, ՖՆ կառուցվածքային վերանայում, ֆիսկալ ռիսկերի համակարգ, հարկային ճեղքի գնահատումներ/ ուղղությամբ տեխնիկական աջակցություն ստանալու հարցում հստակ ժամկետների շուրջ:

3. «Citibank»-ի և «J.P. Morgan»-ի կողմից պատրաստակամություն է հայտնվել համագործակցել հետագայում եվրապարտատոմսերի հնարավոր թողարկումների և հետգնումների ժամանակ:

«J.P. Morgan»-ը պատրաստակամություն է հայտնել աջակցել ՀՀ դրամով միջազգային շուկայում պարտատոմսեր /այդ թվում՝ մեր կողմից ներկայումս մշակվող նպատակային պարտատոմսերը/ ապագա հնարավոր տեղաբաշումների հարցում:

Միաժամանակ, ի պատասխան մեր խնդրանքին՝ «J.P. Morgan»-ից պատրաստակամություն են հայտնել նաև քննարկել մասնավոր հատվածի պարտատոմսերի կոնսոլիդացված թողարկման հնարավորությունները:

4. ԱՄՀ-ի և ՀԲ-ի Կառավարիչների խորհուրդների պլենար նիստին հաստատվել են Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի, Միջազգային զարգացման ընկերակցության, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության և Ներդրումային

վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի տարեկան, ներառյալ՝ ֆինանսական հաշվետվությունները, 2024թ. վարչական բյուջեները:

8. ***Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները***

9. ***Ստորագրությունը, ամսաթիվը՝***

Recoverable Signature

X

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811

18.10.2023թ.